ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ԱՆՏԻՊ ՈՂԲ

(«Տաղ Ստեփանոսին»)

Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հնամյա հարտարապետության շատ հուշարձանների նման մեր հին բանաստեղծության բազմաթիվ նմուշների ավարտուն շինվածքներ ժամանակի ընթացքում ղրկվել են իրենց ամբողջությունից. կորցրել են տողեր, անգամ մեծ ու փոքր հատվածներ, տաղարաններում ընդօրինակվելիս հաճախ մշակվել ու յուրովի ճշդրտվել են հետագա գրիչներից՝ եթե նրանց գաղափար օրինակներում նկատվել են գրչագրական ակնհայտ սխալներ կամ առկա են եղել խճողված ու անհասկանալի տեղեր։ Այդ ճանապարհով էլ ծնվել են միևնույն գործի ձեռագրական տարբեր օրինակներն ու խմբագրությունները։ Նույն բախտին է արժանացել նաև «Տաղ Ստեփանոսին» երկը, որը մինչև այժմ անտիպ է։ Պահպանված երեք ձեռագիր օրինակները[1] ներկայացնում են նրա սոսկ թերի բնագիրը, որը, ըստ երևույթին, կազմում է ողբի սկզբնական ծավալի մեկ երրորդը միայն։ Չնայած բեկորյալ վիճակին՝ ողբը որոշ նյութ է տալիս ճիշտ պատկերացնելու դրամատիկ դեպքերով հարուստ միջնադարյան հայ իրականության ինչ-որ կողմեր. իր գեղարվեստական կատարելությամբ ևս այն արժանի է պատշաճ ուշադրության։

1

Ողբի նյութը վերցված է ավատական ընտանիքի ոլորտից։ Հարազատների արյունռուշտ սարքերի պատկերման հենքի վրա հեղինակը կարողացել է ցուցադրել մարդկային հոգեվիճակներ՝ ծանր ապրումներ, անմխիթար վիշտ և տառապանք կորսված կյանքի համար։

Ահա զուլրն ասեմ տէր Ստեփանոսին.
Երբա՞ր, ասեցէ՛ք հաւասար զման տաւաժամին։

սկսում է ողբասացը և ընթերցողին նախապատրաստում ծանոթացնելու տխուր անցքին։

...Անհայտ է, թե ում սադրանքով՝ Սյունյաց պարոնտեր Ստեփանոսն սպանում է իր խորհրդական մորը՝ Էլխութլուին։ Բանսարկուները կամ ինչպես ասված է ողբում՝ «զինուորքրն չարին» գնում են նրա «մեծ դիւան» հոր մոտ, զգուշացնում, որ որդին, իբր, գալիս է սպանելու նաև նրան։ Նրանք հորից խնդրում են իր որդուն սպանելու վճիռ արձակել։ Հայրն ի վերջո միաբանում է նրանց և դառնում որդեսպան։

Ջորեքշաբթի առավոտ է։ Կատարվածին անտեղյակ մայրը պատում է որդու ճամփան, և հանկարծ՝

Թերին օրկնցին առիւնոտ զգլուխն ի մօրն զոգին։

Ինչպես տեսնում ենք, բախումը կատարվում է հիմնականում մի ընտանիքի ոլորտում, սակայն ընտանեկան ու նեղ թվացող դրամայի մեջ բեկվել է միջնադարի պատմությանը բնորոշ մի էջ։ Հաճախ է պատահել, որ օտար տիրապետողների պահանջով կամ այլ դրդապատճառներով հայ (և ոչ միայն հայ) իշխանական տների որոշ ներկայացուցիչներ, դիրքի և պաշտոնի ժզումով կամ մահվան սարսափից, դիմել են ոճրագործության՝ հաշվի չառնելով անգամ արենակցական կապերը։ Հայտնի է IX դարում արաբական ոստիկան Բուղայի դրդմամբ իր եղբորն սպանած Համամ Արևելցու շարականը, որի մեջ արտահայտված է նրա ապաշխարանքը.

---

1 Ողբի բնագիրը տե՛ս Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № № 3884 (էջ 139ա—140բ), 2676 (էջ 184բ—185բ) և 697 (էջ 56բ—58ա) ձեռագրերում։ Մեջբերումները կատարվում են այս երեք օրինակների համեմատությամբ մեր կազմած քննական բնագրից։

Աբ տեսրէնք կոչեցին օհս հայորդիլ սրեան մահու...
Մեծ են յանցանք իմ, տէ՛ր, զոր գործեցի յահէ մահու,
Հրամանաւ իսմայէլեան բռնաւորին
Երադեցի հեղուլ զարիւն եղբարն...2

Նույնպիսի մոայլ մի անցքի արտացոլում է և Ստեփանոսի ողբը։ Շատ բան որոշակի չի ասված այնտեղ (հավանաբար ասված է եղել, բայց չի պահպանվել)։ Չբացահայտված է մնում էլխուբլուի ով լինելը. գուցե նա մոնղոլ մահմեդական է եղել, որի հետ, ինչպես պարտությամբ շաճ էր էլխանության վարչական ապարատում բարձր պաշտոնների հասած հայ ու վրացի շատ իշխանավորների, Ստեփանոսի հայրը հարկադրված էր եղել կրկին ամուսնանալ ամրապնդվելու համար «մեծ դիւանի» դիրքում։ Այդ ամուսնությունն էլ, թերևս, առիթ էր տվել արյունոտ հետևանքների։ Հարազատ մոր կենդանությամբ այլազգի խորթ մայր ունենալու քրիստոնյային անպատվաբեր ու հակաբարոյական վիճակը որդուն թշնամացրել է հոր հետ։ Դեմ-հանդիման կանգնել են հայրը՝ անձնական բարօրության ու դիրքի «խոհեմ» ընթացքով, և որդին՝ քրիստոնյա մարդու և հարազատ մոր պատվի շահախնդրությամբ։ Մենք չգիտենք նաև, թե ի՞նչ պարագաներում է, որ պարոնտեր Ստեփանոսը միտվել է սպանելու իր մայրացուին։ Ողբագրի այն ասածը, թե՝

Բարբանչեալ բարձին զխելքն խիկարին.
Ետուն սպանանել զիւր մօրուն. հօր աչից հանին,—

շատ է ընդհանուր ու անորոշ և չի բացում կատարվածի գաղտնիքը։ Ովքե՞ր են եղել Ստեփանոսին խելքամաղ անողները՝ հնարավոր չէ կռահել։ Ողբասացի ցասումը, իսկապես, նրա՛նց դեմ է ուղղված։ Նրա՛նք են մեղսագործները և ոչ թե որդին կամ սրան մահապատժի ենթարկելու հրաման արձակած հայրը։ Եվ ողբի սկիզբը Ստեփանոսին արդարացնելու համար է գրված։ Առաջնորդվելով «հանդերձյալ» կյանքում «այն ծածկագիտին» պատասխան տալու հավատքով, այն գաղափարով, թե ինչպես Ֆրիկը կասեր,—

Յերկու դիմաց ինք պարտական,
Մէկ՝ աստէնիս, մէկ՝ անդէնին,—3

հեղինակը էլխուբլուին սպանելու մեղքի ծանրությունը, ինչպես նկատեցինք, դնում է նրանց վրա, որոնք Ստեփանոսին մղել են չարագործության։

Չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ ողբում զուսպ սեր է արտահայտված «աստնվորի» կյանքի հանդեպ։ Կյանքը համեմատված է դրախտի հետ, որից զրկվում է հերոսը։

Ադամն՝ առաջին ստեղծուածն անեղին,
Պատրանօք չարին ի դրախտին հանեալ վանեցին։

Այս է, զոր խաբեաց զԱդամն և ասաց.
«Եթէ կերիցես ի պտղոյն՝ դու լիցիս աստուած»։

Ողբն աչքի է ընկնում հորինվածքի պարզությամբ ու բնականությամբ, ժողովրդական մտածելակերպով։ Իրրև գրական տեսակ այն որքան էլ համանման է XV—XVII դարերում ստեղծված պատմական թեմայով մյուս ողբերին, այնուամենայնիվ, նաև տարբերվում է նրանցից կյանքի գեղարվեստական դրսևորման մի կարևոր առանձնահատկությամբ։ Մինչդեռ նրանցում իրադարձությունները վերարտադրվում են ընդհանուր նկարագրությամբ, իրենց համայնապատկերով, և առանձին հերոսները գրեթե տեղ չունեն,— «Տաղ Ստեփանոսինը», ընդհակառակը, Թլկուրանցու «Տաղ քաչի Վիպարիտին»-ի նման իրականությունը պատկերում է գլխավորապես մասնակի անձանց գործողությունների միջոցով, ընդ որում մեր ողբերին այնքան հատուկ հուզականությունը այստեղ կատարվածի առթիվ հեղինակի արտահայտած բնարական շեղումներով, շեշտված գնահատումներով ու խորհրդածություններով չի պայմանավորված միայն, այլև հերոսների հոգեվիճակների բացահայտմամբ։ Վիպական պատումը ներծծված է և՛ գործող անձանց,

2 Տե՛ս Կ. Կոստանյանց, Համամ Արևելցի, Վաղարշապատ, 1896, էջ 8։
3 Ֆրիկ, Դիվան, ի լույս ընծայեց Տիրա.ր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952, էջ 426։

և՛ ողբասացի անսքող հույզերով, որ հայտարարն է այն բանի, թե պատկերվող անցքը ինչքան խորն է վերապրել հեղինակը։

Անկասկած է, որ Լիպարիտի և Ստեփանոսի մասին ողբերում հերոսները դեռևս հեռու են բնավորություն և անհատ լինելուց, նրանց առանձին հոգեվիճակները դեռ չեն հանգում անհատական հոգեբանության, բայց մյուս ողբերի նկատմամբ այդ երկերի առավելությունն այն է, որ գրանցում դեպքերը ներկայացվում են մասնակի հերոսների, նրանց արարքների և հույզերի պատկերմամբ, թեև, նորից ենք նշում, դեռ չի հայտնաբերված բնավորությունը, գեղարվեստական և մարդկային անհատականությունը, որը, ինչպես հայտնի է, ռեալիստական գրականության նվաճումն է։

2

«Տաղ Ստեփանոսին» ողբի հուզական հագեցվածությունը պայմանավորված է նրա վիպական կողմի դրամատիկ լարվածությամբ, հերոսների կարճ, բայց ազդու խոսքով և հեղինակի քնարական շեղումներով։ Ողբասացն առանձնակի ուշադրություն է դարձրել մարդկային ներաշխարհը բացահայտելուն։

Ահա Ստեփանոսի հայրը։ Առանց այն էլ հոգեխռով ու տանջալի ապրումներ են համակել նրան, մինչ բանսարկուները նրան մղում են ոճրագործության։ Վարպետությամբ է գծված ատիճանարար չար մարդկանց պահանջին համակերպվող հոր հոգեվիճակը։

Դեռևս կնոջ՝ Էլիսաբեթի կորստյան մեծ վշտի մեջ է նա, բայց տագնապով գուժում են, թե որդին այժմ էլ գալիս է նրան սպանելու։ Դրանք նրա պարոնտեր որդու թշնամիներն են. հույս ունեն, որ դատավոր հայրը կպատժի նրան։ Այնպես են հայտնում լուրը, որ կարծես իրենք մտահոգված են «մեծ դիւանի» կյանքի համար։ Բայց վերջինս, որքան էլ վշտահար որդու արարքից, այնուամենայնիվ, սիրում է նրան.

Դեռեցաւ գերին, չճաւատայր բանին.
«Մի՛ զիս ձեռնամուխ առնիցէ՛, այս է իմ որդին»։

Անակնկալ պատասխանի վրա զարմացած և չկռահելով «օրենքի» մարդու վարանման բուն պատճառը՝ բանսարկուները ջանում են հանգստացնել նրան. թող ինքը նեղություն չքաշի, թող թե՛նց հանձնարարի, իրե՛նք կպատժեն Ստեփանոսին, և հայրն ամենևին էլ չի՛ վարկաբեկվի.

«Տո՛ւր ի մեզ, զի սպանցուք այսօր զորդին»։

Նրանք չեն ըմբռնում, որ դատավորի մեջ դեռ ուժեղ է հայրական սիրո զգացումը։

Առայժմ հոր հոգում կռվում են մարդն ու իշխանավորը, և առաջինը նկատելիորեն զորեղ է երկրորդից։ Դեռևս նա համառում ու հրաժարվում է անմարդկային պահանջը կատարել, տառապում ու լռո լալիս է որդու բախտի համար.

Դուլաց վերըստին, լայր սիրտն ի փորին.
«Քահանա[յա]պետ է, ասէ, կարգէն պատկառիմ»։

Բանսարկուներին հայտնի է դառնում, որ այդ ձևով Ստեփանոսից վրեժ լուծելն անհնարին է։ Եվ ահա երևան է գալիս վերջին միջոցը.

«Եթէ ոչ տայցես մեզ հրաման՝ մեռցիս ընդ երմին»։

Այսինքն՝ սպանիր, որ չսպանվես։ Ի վերջո օտարին ծառայագրված մարդու մեջ հաղթում է մորթապաշտությունը. հայրը նախընտրում է դավաճանել խղճին և որդուն հանձնել նրա թշնամիների հաշվեհարդարին։

Դաւն եդեալ՝ բանին վրեիորն ճատին։
Ասէ. «Դո՛ւք տուչիք պատասխան այն ծածկագիտին»։

Ողբասացը ժլատ, բայց մեծիմաստ տողերով կարողացել է բացահայտել հոր ծանր ապրումները, նրա հոգեկան դրաման։ Ի տարբերություն միջնադարյան շատ վիպական ստեղծագործությունների հերոսների, որոնք հենց սկզբից կա՛մ անբիծ բարությամբ, կա՛մ էլ անխառն չարությամբ են օժտված, նրան հատուկ է հակասականությունը։ Նա «ի ծնե» չար չէ, այլ այդպիսին է դառնում բարդ տատանումների ճանապարհով։

Տպավորիչ է նաև Ստեփանոսի մայրը։

Գիտենք, որ միջնադարում կինը դիտվում էր իբրև թուլասիրտ, թուլամիտ ու բազմադեմ մի էակ և այդ հաճախ այն պատճառաբանությամբ, թե համաձայն աստվածաշնչյան ավանդության՝ նախամայր Եվան, ըմպելով «յիմարութիւն» և «մոռացութեան» գինին, թուլություն էր ունեցել ուտելու արգելված պտուղը և պատճառ էր դարձել, որ մարդը զրկվեր առասպելական դրախտի բնակիչ մնալու հաճույքից։ Հնօրյա գրականության էջերը գինու և կնոջ մասին լի են պարսավական ու անողոք դատողություններով։ Բայց շատ հաճախ, երբ գրողը զանց էր առնում դրախտ կորուսյալի սխեման, առաջնորդվում կյանքի պատկերներով և հումանիստական մոտեցումով, նկատի առնում տառապող ու հայրենասեր, բազմաշնորհ և մեծ սիրո ընդունակ կանանց,—գրականության մեջ երևան էին գալիս այնպիսի հրապուրիչ հերոսուհիներ, ինչպես Փառանձեմը՝ Փավստոսի, Սաթենիկը՝ Խորենացու, նախարարների կանայք՝ Եղիշեի մոտ, Երզնկացու, Թլկուրանցու և Աղթամարցու քնարերգության մեջ երգված գեղուհիները, նաև Ստեփանոսի մայրը այս ողբում։

Սա ուժեղ և համարձակ կին է, հանուն ճշմարտության ու հաշվեհարդարի աստծու վրեժխնդրությունը հայցող։ Մեծ բնականություն կա նրա լացում, որ անդարձ կորստի ափսոսանք չէ միայն, այլև բողոք ու դժգոհություն բախտից։ Նա մեկ ծնրադրում, բայց մեկ էլ ծառս է լինում երկնքի դիմաց, որովհետև զրկվել է իր հույս ու ապավենից։ Ողբի այդ հատվածը ոգված է իրև տխուր մի բայաթի։

Լայր մայրն և ճրչէր, խրնդրէր զիւր որդին,
Ողբայր, ճառաչէր, գալարէր աղիքն ի փորին։

...Ծունր ածէր իւր մէրն ղէմ արարողին.
«Աստուած, դու գիտես, որ էս մէկս, էլ որդի չունիմ»։

...Հայէր ի յերկինս յոյժ արտասուաղին.
«Արև՛, մի՛ ծագէր դու այսօր՝ չտեսնում զիմ որդին»։

Համբարձեալ ըգձնոն ղէմ արարողին,
Զզոզն արեամբ լրցեալ և խրնդրէր վրէժ սպանողին։

Թվում է՝ մայրը հավատում է խոսքի ու անեծքի թովիչ զորությանը, համոզված է, որ իր պաղատանքով պիտի պատժվեն որդուն սպանողները։ Սպանված որդուն, արևին ու աստծուն ուղղված հռետորական դիմումները նրա խոսքին տալիս են անկեղծ հուզականություն։ Հայտնի է, որ ամենահին դարերից սկսած հուղարկավորության ժամանակ լալական կանայք հատուկ եղանակով ու նվագով աշխար ու կոծ էին բարձրացնում՝ կենդանի մնացածների մեջ խանդադատանք ու մրմուռ առաջացնելով մեռոնոի հանդեպ։ Նրանք հանգուցյալի մահվան պատմությանը զուգահեռ հմայիչ համեմատություններով կատարում էին նաև նրա անձի վառաբանությունը։ Ստեփանոսի մայրը ևս, կարծես, որդուն կորցնելու սնփարատելի կսկծից բանահյուսական վիպական ժամանակների մի եղեմամայր լինի, որը մարմնական ու հոգեկան անսահման տառապանք է ապրում։ Նրա լացի պատկերը երգի ամենաազդու կտորն է, ճարտասանական արտահայտությամբ ասած՝ նրա «կրիդ տեղին»։

Ողբում Ստեփանոսն ինքն իր անունից երբեք հանդես չի գալիս, ոչ մի անգամ չի լսվում նրա ձայնը, բայց հեղինակը կարողացել է նրան ճանաչելի դարձնել ինչպես մոր լաց-գովասանքի, այնպես էլ իր քնարական շեղումների միջոցով։ Այդ հատվածներում մասամբ բացվում է հերոսի «կենսագրությունը», գծվում նրա դիմանկարը։ Ողբասացը ցանկացել է իրեն ունկնդիր «եղբարց» դիրելի դարձնել Ստեփանոսին։ Եվ խոսք ու համեմատություն չի խնայված նրան նկարելու առաջվել շքեղ, նույնիսկ արևելյան գունագեղությամբ.

Զայն բոլոր երեսն տէր Ստեփանոսին
Որպէս թէ լուսին էր բոլորած ի տասնուհինգին։

[Զ]այն ծով-ծով աչերն տէր Ստեփանոսին
Որպէս ոէ կանթեղ էր վառած ի մէջ տանուրին։

[Զ]այն կամար ունեարն տէր Ստեփանոսին
Որպէս թէ քաշած էր կամար աւաղ խորանին։

Ստեփանոսի արտաքինի այս դովերգումը, եկեղեցական ատրիբուտների մեղմ շաղախով հանդերձ, անվիճելի հարազատություն ունի ժողովրդական բանարվեստին։ Հերոսի մարմնական բարեմասնությունների թվարկումը հեղինակը կատարել է այն նպատակով, որպեսզի ցույց տա մահվան բերած ավերքը, մարդու առինքնող շինվածքի խորտակումը։ Կյանքի և մահվան այդ-որինակ հանդիպադրումը բնորոշ է նաև ժողովրդական վիպական երգերին։ Թունավորված Մոկաց Միրզայի համար, օրինակ, վիպերգում ասված է.

Թրջավ բալակ աչեր, կախավ լամեն,
Թափավ մորուսեն,
Թափավ մազեր կարմիր երեսեն,
Թափավ բեղեր նազիկ պրոկեն,
Թափավ դեղին ջուր սպիտակ լեշեսկ։

Մահվան առաջ տեղի է տալիս նաև Ստեփանոսի գեղեցկությունը.

Թառմեցաւ ծաղիկն. էն վարդն ի բրփին.
Կարմիր ու սպիտակ իւր երեսն դարձաւ ի դեղին։

Ողբի եզրափակիչ տողերին հաջորդում է մի իմաստավոր տեսարան. արևածագին լացող մոր ձայնը վրդովել է նաև Ստեփանոսի ձիու անդորրը. սա կենդանական բնազդով կոահում է տիրոջ գլխին եկած փորձանքը։ Մեծ վիշտը համակել է այդ «բոզ-բաղաւիին», որ ծառս է լինում, կտրում շղթաները, դոփում ախոռի սալարկին։ Նա խոսում է ինչպես մի բանական արարած, խրխնջում է և աղիողորմ կանչում, որ բացեն դռները.

Խորխոնջէր իւր ձին, այն բոզ-բաղաւիս,
Կոխէր և կրտրէր զպխաւուն, սալարկն յախոռին։

Խօսէր մէկ աղին. «Բացէ՛ք զդրուրնին,
Որ երթամ հասնիմ օգնական Սիւնեաց իշխանին»։

3

Ողբի գրական արժեքին ծանոթանալուց հետո անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու կարևոր հարցի. ո՞վ է նրա հեղինակը, պատմական ի՞նչ դարաշրջանի հետ է կապվում նրա բովանդակությունը։ Բանն այն է, որ բնագրում բացակայում է հեղինակի անունը, և չի ակնարկվում որևէ ժամանակ ու թվական, իսկ պատմագիտական հայտնի աղբյուրները չեն պարունակում որևէ վկայություն՝ անկասկած նշանավոր եղած նրա հերոսի անձնավորության և գոհվելու հանգամանքների վերաբերյալ, որը յուրովի կնպաստեր ի հայտ բերելու ողբասացին։ Բայց ողբը որոշ կռվաններ է ընձեռում գեթ մոտավոր կերպով որոշելու արտացոլված ժամանակը և ենթադրություններ անելու հեղինակի ով լինելու մասին։

Այնտեղ հիշվում է ինչ-որ Սյունյաց բերդ, հերոսը ևս համարվում է Սյունյաց իշխան և պարոն, տեր և Բահանայապետ, իսկ օրինակներից հնագույնի խորագրում՝ Սյունյաց եպիսկոպոս։ Հերոսի Ստեփանոս անունը շատ բնորոշ է Սյունիքի Օրբելյան տոհմին. XIII—XV դարերում այդ անունն են կրել հիշյալ տոհմի աշխարհիկ և հոգևոր մի քանի ներկայացուցիչներ, որոնցից ոչ մեկը, սակայն, չի նույնանում ողբի հերոսի հետ։ բայց վերջինիս պատմական անձնավորություն լինելը կասկած չի հարուցում, մանավանդ որ երկում նրա մասին ասված է.

Թագուոր էր բախրին այն Սիւնեաց բերդին.
Նա զհումմն բոաւան կու վարէր զաւետարանին։

Ուրեմն եպիսկոպոսական և իշխանական նրա նստավայրը եղել է Սյունյաց մի բերդ։ Բերված երկրորդ բանատողը վկայում է, որ նա իր իշխանությունն ու օրենքը («հումքմն») վարել է ավետարանի ոգով («բոաւան զաւետարանին»)կամ ըստ միջնադարի քրիստոնեական ըմբռնման՝ գործել է ճիշտ ընթացքով։

4 «Հավար ու մի խաղ», առաջին հիսնյակ, կազմեցին՝ Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, երկրորդ տպագրություն, Վաղարշապատ, 1904, էջ 64։

Ստեփանոսի անցյալի մասին ևս ակնարկ կա. հեղինակային խոսքում վերհիշվում է, որ նա մի ժամանակ Թավրիզում ծառայելիս է եղել հնձելազորում.

Թավրէզ մաղամին զարդ էր հնձելին...

Ապա ողբի եզրափակիչ տան մեջ նշվում է Եղեգնաձորը («Եղեգն[ա]ձ ձոր...»)՝ անկասկած հերոսի հայրենական գավառը, ուր ապրելիս է եղել նրա մայրը։ Այդպիսով, երկում արտացոլված միջավայրը Արևելյան Հայաստանն է, ավելի կոնկրետ՝ Պարսկաստանին սահմանակից Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառը, Եղեգնաձորը, և մասամբ Ատրպատականի Թավրիզ քաղաքը՝ ավելի վաղ անցյալի համար։

Հարց է ծագում. ինչպե՞ս է պատահել, որ զինվորականի ուղին ընտրած Ստեփանոսը հետագայում դարձել էր հոգևորական, ի՞նչ հանգամանքներ էին ստիպել հնձելազորայինին մտնելու եպիսկոպոսի գերի մեջ։ Դիտված է, որ մոնղոլական տիրապետության ժամանակներում և ավելի ուշ հայ եկեղեցու պաշտոնյաները վայելում էին օտար նվաճողների հովանավորությունը, օգտվում որոշակի իրավունքներից։ Եկեղեցական կալվածները հիմնականում հարկման ենթակա չէին. թեև պետական հարկահանները երբեմն ոտնահարում էին նաև այդ արտոնությունները։ Հոգևոր տերերի ունեցած իրավունքները, բնականաբար, հրապուրում էին հայ աշխարհիկ ֆեոդալներին, որոնց նկատմամբ օտար տիրապետողները գործադրում էին նրանց իրավունքների սահմանափակման և տիրույթների բռնագրավման քաղաքականություն։ Եվ ահա XIV—XV դարերում խոշոր չափերի է հասնում մի երևույթ. հայ իշխանական տների ներկայացուցիչներից շատերը օտարազգի բռնակալների սեփականման և հարկման սխորժակից փրկելու նպատակով իրենց ժառանգական կալվածները «վակֆ» էին անում (նվիրաբերում էին) եկեղեցական հաստատություններին, իսկ իրենք ընդունում հոգևոր կոչում՝ նոր ձևով պահպանելով իրենց սեփականատիրական իրավունքը։ Ինչպես դիպուկ կերպով նկատել է պատմաբան Լ. Խաչիկյանը՝ «կյանքի է կոչվում սոցիալական մի նոր տերմին՝ «պարոն-տէր», որը հատկացվում է բոլոր այն հայ կալվածատեր-ֆեոդալներին, որոնք շարունակում էին իրենց ձեռքում պահել իրենց հայրենական կալվածքները, լինելով միաժամանակ և՛ «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և՛ «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ)[5]։

Մեր համոզմամբ աշխարհական պարոնից հոգևոր առաջնորդ դարձած Ստեփանոսի անցած ուղին պատմական նույն երևույթի հետ է առնչվում։ Տեսանք, որ ողբում նրա մասին խոսվում է և՛ իբրև Սյունյաց իշխանի, և՛ իբրև եպիսկոպոսի (կամ քահանայապետի), ըստ այդմ էլ նա ներկայացվում է մերթ «պարոն», մերթ էլ «տէր» հարգական կոչումներով, այսինքն՝ «պարոն-տէր»[6]։ Լինելով հայ իշխանական տոհմերից մեկի ներկայացուցիչ (հավանաբար՝ Սրբելյան), հանուն հայրենական կալվածների անբաժան տիրակալության՝ նա երիտասարդ հասակում համակերպվել է հոգևորականի սքեմ կրելու և եպիսկոպոսի դիրքում մնալու՝ երբեմնի զինվորականին այնքան խորթ պարտիքին։

Ստեփանոսն ապրած պիտի լինի XIV դարում, ոչ ուշ, քան մինչև XV դարի սկզբները, որովհետև ողբի երեք օրինակներից հնագույնը[7] 1461 թ. ընդօրինակություն է, թերի մի բնագիր՝ ապացույց այն բանի, որ ամբողջական ողբն այդ թվականից շատ ավելի վաղ է ստեղծվել։ Համենայն դեպս բավական երկար ժամանակ էր հարկավոր, որպեսզի ձեռագիր ժողովածուներում արտագրվելու ճանապարհով այն կրճատվեր ու այդքան պակասավոր դառնար։

4

Նույն ժամանակահատվածում էլ պետք է որոնել ողբի հեղինակին։ Կասկածից վեր է, որ նա Սյունիքի հետ կապված ստեղծագործող է եղել. ողբում անդրադարձված գործողության տե-

5 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, 1958, էջ LXIV։

6 Ի դեպ, ողբում կա մի այսպիսի տող. Որդեա՛կ իմ, որդեա՛կ սուլթանշահ (այլ օրինակներում՝ սոլթանշայ, սուլտանշայ), մօրս մա՛սն ու բաժին։

Ողբի վերամշակումով հետագայում Ստեփանոս Սերաստացի եպիսկոպոսի մասին սարքված վկայաբանության օրինակներից մեկում ընդգծվածի փոխարեն կա «պարոն-տէր» բառը (վկայաբանության վերաբերյալ տե՛ս տողատակի մեր № 9 ծանոթությունը). այսպես՝ Որդեա՛կ իմ, որդեա՛կ պարոն-տէր, վա՛յ քո սպանողին (ձեռ. № 10050, էջ 116ա)։ Ենթադրում ենք, որ «պարոն-տէր» ընթերցվածը գուցե ողբի հեղինակին է եղել, և վկայաբանության սազացնողն իր ձեռքի տակ ունեցել է ողբի այնպիսի օրինակ, որտեղ դեռևս մուտք չէր գործել «սուլթանշահը»։

7 Մատենադարան, ձեռ. № 3884, էջ 139ա—140բ։

ղանքը մատնում է և նրա հեղինակի որտեղացի լինելը, նրա բնաշխարհը։ Երբ գրական որևէ երկի պատկանելության մասին բացակայում են ստույգ տվյալները, ուրիշ կողմերին առընթեր կարևորություն են ստանում նաև տվյալ ստեղծագործության ձևական մոմենտները, եթե նրանք նպաստում են հարցի պարզաբանմանը։ «Տաղ Ստեփանոսին» ողբի համար մի այդպիսի ձևական, բայց կարևոր հատկանիշ է տաղաչափությունը։ Նրա յուրաքանչյուր երկատող տան առաջին՝ 10-վանկանի բանատողը կազմված է յամբ-անապեստյան երկու անդամից (5—5), իսկ երկրորդ՝ 13-վանկանի տողում նույն հնգավանկ անդամների միջև երևան է գալիս նաև մեկ անապեստ (5—3—5). օրինակ՝

Յայնմ առաւօտին / սև չորեքշաբթին
Բերին օրգեցին / արիւնոտ / զգլուխն ի մօրն զոգին։

Այս գեղեցիկ և յուրահատուկ չափը բովանդակ հայ պոեզիայում սակավագյուտ է։ Բացի Առաքել Սյունեցու մի շարք քերթվածներից[8], այդպիսի տաղաչափությամբ մեզ հայտնի է միայն 7 գործ, բոլորն էլ ստեղծված նրանից հետո[9]։ Այս ստեղծագործությունները, ճիշտ է, գալիս են ապացուցելու, որ ոտանավորի նշված չափը հատուկ է ոչ միայն Սյունեցուն, բայց և փաստ է, որ այն ամենից ավելի դրսևորվել է նրա մոտ, մի բանաստեղծ, որի հարուստ ստեղծագործությունը Խրյուսովի հիացմունքին արժանացած հայ միջնադարյան քնարերգության ձևերի բազմազանության վառ վկայություններից է։

Նշված չափով Սյունեցու գրած քերթվածների և քննվող ողբի միջև նկատելի են բանաստեղծական ձևի նաև այլ ընդհանուր կողմեր. քերթվածներում ևս տողերը մեծ մասամբ ավարտվում են ին հանգով, տների սկզբնատառերը, բացառությամբ երկուսի («Տաղ Ղազարու յարութեան» և, ըստ Պոտուրյանի հրատարակության, ԼԲ քերթվածները), կազմում են կա՛մ հայերենի այբուբենը (Գ, Թ, Ժ, ԺԱ, ԼԱ քերթվածները), կա՛մ հեղինակի անունը (ԺԴ և Լ քերթվածները), կա՛մ էլ հեղինակի անունն ու բանաստեղծության խորագիրը (ԻԹ և «Մեծի չորեքշաբթի» քերթվածները)։

Սակայն ամենագլխավորը, որ աղերսում է Ստեփանոսի ողբը Սյունեցու քերթվածների հետ, մարդկային ապրումների ու մտորումների բանաստեղծական վերարտադրման համանմանությունն է վերջիններում և ողբում։

Ահա ինչպես է ներկայացված պատվիրանազանց Եվայի ողբալի վիճակը «Վասն Նախնեացն Ադամայ և կնոջն» քերթվածում.

---

8 Տե՛ս Հ. Մ. Պոտուրյան, Առաքել Սիւնեցի և իր քերթուածները, Վենետիկ, 1914, Գ, Թ, Ժ, ԺԱ, ԺԴ, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ քերթվածները, նաև Մատենադարանի ձեռագրերում պահպանված՝ «Տաղ Ղազարու յարութեան» (ձեռ. № 2672, թ. 230—232) և «Մեծի չորեքշաբթի» (ձեռ. № 425, թ. 208) բանաստեղծությունները։ Հայ միջնադարյան պոեզիայի մեծ գիտակ Մ. Պոտուրյանը նկատել է. «5—3—5 չափը եղական է Սյունեցուն» (նույն տեղում, էջ Ծ)։

9 Դրանցից անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալ միայն մեկին, որը վկայաբանական բնույթ է՝ 1387 թ. նահատակված Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսի մասին։ Հրատարակել է Ալիշանը «Բազմավէպ» հանդեսում (1848 թ., էջ 341)՝ «Ի տէր Ստեփանոս նահատակ Սեբաստիոյ» խորագրով և ամփոփ ուսումնասիրությամբ (նույն տեղում, էջ 342—343)։ Այնուհետև արտատպվել է Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի կազմած «Հայոց նոր վկաները» ժողովածուում (Վաղարշապատ, 1903, էջ 149—150)։ Պահպանվել է նաև Մատենադարանի №№ 10050 (էջ 114բ—116բ) և 7707 (էջ 133բ—135բ) ձեռագրերում։ Ալիշանի կարծիքով՝ թերևս դեպքին ժամանակակցի գործ է (տե՛ս «Բազմավէպ», 1848, էջ 342)։ Մեծահմտաբավ հայագետը, ըստ երևույթին, ծանոթ չի եղել Սյունյաց Ստեփանոսի մասին ողբին, որը վկայաբանության անհայտ հեղինակն անկրկնելիորեն իր ձեռքի տակ է ունեցել և առատորեն տողեր քաղել նրանից՝ աննշան փոփոխություններ միայն մտցնելով։ Դա ապացուցվում է նրանով, որ երկու երգում համապատասխանող տողերը ողբում, հիմնականում, իրենց տեղում են, ենթարկված նրա ակրոստիք հորինվածքին, իսկ վկայաբանության մեջ ցրված են, խառնված այլ տողերի և կորցրել են այբբենական հաջորդականությունը։ Դիտելու արժանի է նաև հետևյալ հանգամանքը։ Հայսմավուրքում տեղ է գտել Սեբաստացու արձակ վկայաբանությունը (տե՛ս «Հայոց նոր վկաները» ժողովածուն, էջ 137—148)։ Սրա և չափածոյի միջև կան բացահայտ տարբերություններ։ Անկասկած է, որ արձակի նկատմամբ չափածո վկայաբանության մեջ նկատվող հակասությունը հետևանք է այն բանի, որ վերջինում «Տաղ Ստեփանոսին» ողբից երկու տասնյակից ավելի տողեր են ներառվել և, չնչին փոփոխությունների ենթարկվելով միայն, հարմարեցվել Սեբաստացուն։

Ղօղանջեալ նորին ընդ ուտել պրտպին
Հառաչմամբ գոչէր մորմոքեալ իւր սիրտն ի փորին

Ոչ բարձեալ ուժգին կրսկրծմամբ ելիս,
Լեալ արենաթափ փետտելով զհերսն իւր ցաւագին: (Ժ քերթված)

Սրան բացահայտ նմանություն ունեն ողբի հետևյալ տողերը.

Լայր, խանդաղատէր մօր սիրտն ի փորին,
Պազնէր և դրնէր արիւնոտ զերեսն յերեսին:

Լայր մայրն և ճր-էր, խրնդրէր զիւր որդին,
Ողբայր, հառաչէր, գալարէր աղիքն ի փորին:

Ահա և մի երկատող Սյունեցու մեկ ուրիշ քերթվածից.

Այլ մայր միածնին կայր ընդդէմ խաչին,
Լայր ողորմագին և ողբայր զիւր սասուածորդիս. (ԻԹ քերթված):

Չնայած առդրված երեք հատվածներում էլ տարբեր է ոգբանությունը (մեկում օձից իարված Եվայի տվայտանքն է ներկայացված, երկրորդում՝ որդեկորույս իրական մոր հառաչն ու լացը, երրորդում՝ ավանդական տիրամոր մորմոքը խաչված Քրիստոսի վրա), նրանք նույնիսկ սակավ բառերով են համընկնում (լայր, ողբայր, սիրտն ի փորին, ճիչ-ճրչէր, հառաչմամբ-հառաչէր), բայց ներքին տրամադրությունը, հուզական ատաղձը երեքում էլ նույնն է։ Բանաստեղծական արենակցություններ նրանցում այնքան որոշակի է, որ թվում է, թե նրանք նույն գրչի արգասիք են։

ԻԹ քերթվածի հետևյալ բանատողերի՝

Մի՛ ծագէր արփի զարեգակդ յերկրի,
Որ այսօր ըգլոյս իմ աչացս՝ մերկ ի խաչ տեսի.—

միտքը համարյա նույնությամբ արտահայտված է ողբում, Ստեփանոսի մոր համար.

Հայէր ի յերկինս յոյժ արտասուագին.
«Արև՛, մի՛ ծագէր դու այսօր՝ չտեսնում զիմ որդին»:

Ողբի ինչ-ինչ հատվածներին հարազատ այդ կարգի այլ օրինակներ ևս կարելի է վկայակոչել Սյունեցու քերթվածներից, բայց բավարարվենք բերվածով։

Կարևոր է նաև հետևյալ քերականական առանձնահատկությունը։ Սյունեցին, նախադասություններ կառուցելիս, հաճախ հարաբերական դերանվամբ ենթական հանդես է բերում ոչ թեր (ուղղական), այլ զոր (հայցական) ձևով։ Այս երևույթը, ինչպես նկատել է բանասեր Հ. Ն. Տեր-Ներսեսյանը, մասնավորապես ակնհայտ է «Դրախտագրքում»[10]։ Սյունեցին կազմում է այսպիսի վերջադաս երկրորդական նախադասություններ. «զոր աստ ոչ գոյ», «զոր է յօգուտ ձեզ», «զոր քաղէ զամենեսեանս» և այլն։ Նույն բանը երևան է եկել նաև ողբում.

Այս է, զոր խաբեաց զԱդամն և ասաց...

Մինչդեռ պիտի լիներ. «Այս է, որ խաբեաց զԱդամն և ասաց»։

Ողբի տաղաչափական, գեղարվեստական-պատկերավորման և քերականական նշված առանձնահատկությունները, այդպիսով, որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ նրա հեղինակը, թերևս, Առաքել Սյունեցին է, որի գրական գործունեության եռուն շրջանը, համաձայն մեզ հասած տվյալների, համընկնում է XV դարի առաջին տասնամյակին։

Ամփոփենք։ Միայն ձեռագրական բեկորներով մեզ հասած «Տաղ Ստեփանոսին» գործը, չնայած իր փոքր ծավալին, գեղարվեստական և ճանաչողական ակնառու արժեք ունի։ Իբրև ողբ այն կարող է դրվել հայ միջնադարյան ողբագրության այնպիսի երկերի կողքին, ինչպիսիք են Դավթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջևանշերի մեծի իշխանին» և Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտին» ստեղծագործությունները։

---

10 *Տե՛ս Առաքել Սիւնեցի, Դրախտագիրք. հրատարակեց Հ. Ներսես Տեր-Ներսեսյան, Վենետիկ, 1956, էջ 45։*